

ՀԱՍՆԵՏ ՄԱԼԽԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հուլիսի 5-ին կյանքից անժամանակ հեռացավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մալխասի Հարությունյանը:

Ծնվել է 1948 թ. սեպտեմբերի 25-ին Հայկական ԽՍՀ Սևանի շրջանի (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի) Լճաշեն գյուղում՝ ծառայողի ընտանիքում: 1954–1966 թթ. սովորել և ավարտել է Լճաշենի միջնակարգ դպրոցը, իսկ 1973 թ. ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1982 թ. պաշտպանել է թեկնածուական, 1991 թ.՝ դոկտորական ատենախոսություն,

իսկ 2005 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Հ. Հարությունյանը 1969–1978 թթ. Սևանի շրջանի Գեղամավան և Լճաշեն գյուղերի միջնակարգ դպրոցներում աշխատել է որպես պատմության ուսուցիչ, ապա՝ ուսումնական մասի վարիչ: 1978 թ. հունիս-դեկտեմբերին ավագ գիտաշխատող է եղել Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, ապա 1978 թ. դեկտեմբերից՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ նախ Հին դարերի պատմության բաժնում, իսկ 1979 թ. կեսերին տեղափոխվել Հոկտեմբերյան հեղափոխություն և սոցիալիստական շինարարության պատմության բաժին:

Հ. Հարությունյանը հանրապետության ճանաչված պատմաբան-մանկավարժներից էր, սկզբունքային պատմաբան և բարեխիղճ գիտական ղեկավար: Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել շուրջ մեկ տասնյակ երիտասարդներ, եղել է թեկնածուական և դոկտորական մի շարք ատենախոսությունների ընդգլխավոր: Անվանի պատմաբանը 1994 թ. հանդիսանում էր Գավառի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչը: 2003–2005 թթ. կատարել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության բաժնի վարիչի պարտականությունները, իսկ 2010 թ. հուլիսից՝ Նորագույն պատմության բաժնի վարիչն էր: Նա Պատմության ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդների, ՀՀ ԲՈԿ-ի 004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդի անդամ էր:

Զավազանց լայն էր պրոֆ. Հ. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա ուսումնասիրություններ է հրատարակել հին

ու միջին դարերի, նոր և նորագույն ժամանակաշրջանների տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Այդուհանդերձ, նրա գիտական վաստակը մեծապես դրսևորվել է Հայաստանի՝ XIX և XX դարերի պատմության ուսումնասիրության բնագավառում՝ ժողովրդագրական գործընթացներ, հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածք, Լեոնային Ղա-րաբաղի հիմնախնդիր, Նոր Բայազետի գավառի պատմություն և այլն: Հեղինակ է 8 մենագրության և շուրջ 100 գիտական հոդվածների, դպրոցական դասագրքերի: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստված «Հայոց պատմության» նոր ակադեմիական հրատարակության IV հատորի երկու գրքերում (որից վերջինի պատասխանատու խմբագիրն էր) տեղ են գտել նաև անվանի պատմաբանի հեղինակած տեքստերը:

Վերջին տարիներին պրոֆ. Հարությունյանն աշխատում էր «Երևանի նահանգը 1849–1917 թվականներին» մենագրության վրա, ուր անդրադարձ էր լինելու նահանգի ստեղծման, վարչատարածքային կառուցվածքին, ժողովրդագրական պատկերին, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման հիմնահարցերին:

Պրոֆ. Հ. Հարությունյանն իր քաղաքացիական, մարդկային ու բարոյական անուրանալի արժանիքներով պարզությամբ, բարության, ձեռք մեկնելու պատրաստակամությամբ, սրտացավ վերաբերմունքով մեծ հեղինակություն էր վայելում ընկերական ու գիտական-մտավորական միջավայրում:

Գիտության անխոնջ մշակ Համլետ Մալխասի Հարությունյանի հիշատակը հավերժ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում, իսկ գիտական ուսումնասիրությունները երկար տասնամյակներ սեղանի գրքեր կլինեն Հայաստանի XIX–XX դարերի պատմությունն ուսումնասիրող պատմաբանների համար:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ